



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

21/02/2019

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Արտաշ Այվազյանը, Ռոբերտ Բաղդասարյանը, Նարինե Գրիգորյանը, Գառնիկ Խաչատրյանը, Դավիթ Մովսիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝  
Աշոտ Հարությունյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին

21/02/2019թ.թիվ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով .

Հաստատել 21/02/2018 թ. թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Համայնքային բյուջեում վերաբաշխում կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու և ավագանու 19.11.2018թ-ի թիվ 89 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին
3. Աղբատար մեքենա վարձակալելու մասին
4. Վարձակալության պայամանագրերը լուծելու մասին
5. Համայնքի կարիքավոր բնակիչներին դրամական օգնություն տալու մասին

